լով՝ իրեն գործածութեանը լաւ սեպած որ և է բարոյականութիւնը պիտի ուսուցանէ աշակերտացը։ Բաւական չէր արդեօք աշխարհական ազգագրի մի յարմարելու համար մի միայն պատուով ապրիլ սորվեցընել անոնց։ Այլ պատուաւոր մարդ ըլլալու համար եւս քանի՛ քանի՛ եղանակներ կան։

„Ընթիւ առարկութեանց մէջ աչքի զարնող ուրիշ առարկութիւն մի եւս կայ։ Սիէ՛ԼԸ կը պահանջէ որ Տէրութիւնը իւր դպրոցներուն աշակերտաց աղատ բարոյականը սորվեցընէ. ասիկայ յայտնապէս անոր համար է, որ տղաքը անոնց այս ուսմունքէն շահուելով՝ բարոյագէտ քաղաքացիներ ըլլան, ինչպէս կ'ըսէ Յիշեալ լրագիրը։

„Արդ, ի՞նչ ազդեցութիւն կրնայ ունենալ այն ուսմունքը որ բնաւ սկզբունքի մի վերայ հիմնուած չէ. ի՞նչ արժէք ունի այն օրէնքը՝ որ ոչ իւր հաստատութիւնն ունի և ոչ օրինադիրը։ Ընդհանուր է տղու մի քարոզել համեստութեան և բնական առաքինութեան այս մեկնութիւն չունեցող ճապաղ տեսակութիւնը, թէ որ անոր խիղճը ուրիշ տեղէ մի լոյս չընդունի, և թէ որ ընտանեաց դասերն և օրինակները այս տեսակ կրթութեան մի դրութեան դէմ չը կենան, պարտաւոր բնութիւնը ինքնին կը տկարանայ, և կրից ձայնը աւելի ճոռում և համոզիչ կ'երեւի իրեն քան զիւր վարժապետաց գեղեցիկ ոճերը։ Երեւելի գիտնական եկեղեցականին մէկը իրաւամբք ըսած է ուրեմն, թէ Ա՛ր բարոյականը զօրաւոր կրնայ ըլլալ, երբ բովանդակ բարոյականութեան հիմունքն ու հաստատութիւնը կործանած են „։

Ի յաջորդն։

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Երուսաղէմ իբրեւ քաղաք՝ հին և նոր պատմութեանց, և իբրեւ վայր յորում իւր հիմնարկութենէն ի վեր զանազան նուիրական խորհրդոց տեղի եղած է և լեցուն է սրբազան աւանդութիւններով, վասն որոյ թէ՛ քրիստոնեայ և թէ անքրիստոնեայ ճանապարհորդներու պայմանատեղի եղած և բոլոր ազգամածին որդւոց մասնաւոր յարգանացն և կամ գէթ անոնց հետաքրքրութեան տեղի համարուած է։ Վասն որոյ ի սկզբանէ ի վեր թէպէտև երեւելի մարդկանց և իմաստուն արանց ժամանակ ժամանակ պարզ այցելութեան և կամ բարեպաշտական նպատակաւ զսուրբ Քաղաքը պատուելին նշանակուած կան պատմութեանց մէջ, սակայն այս մօտ տարիներս անոնց թիւը յաճախելով, արժանի համարած եմք ամսաթերթիս միջոցաւ յիշատակել անոնց այցելութիւնները։

Անցեալ տարւոյս երեւելի ճանապարհորդաց մէջ նշանաւոր էր Անգլիոյ Վ՛ԷՀափաւ Թագուհւոյն որդին Ա՛րթուր ծաղկահասակ իշխանը, որ իւր դաստիարակին և քանի մի երեւելի անձինքներու հետ եկաւ, ծրագրեալ կերպով շրջեցաւ թէ՛ սուրբ Քաղաքիս մէջ և թէ արտաքոյ եղած սուրբ տեղերը, վասն որոյ իւր թագաւորազն անձին արժանաւոր պատիւը չուղեց ընդունիլ կառավարութեան կողմէն։ Մարտի 13 ին եկաւ, ու քանի մի օրէն յետոյ մեկնեցաւ ի Յորդանան։

— Հոկտեմբեր 5 ին եկաւ ի սուրբ Քաղաքս Դամասկոսի Նախորդ կուսակալ Շ՛իրուանի — զատէ Մէհմէտ Բիւշտիւ փաշայն, մի միայն բարեպաշտական այցելութիւն մատուցա-

digitised by A.R.A.R.@

նելու Յ.օմէրի հռչակաւոր Տաճարին, որ Սողոմոնի Տաճարին տեղը կառուցուած է, նմանապէս Ս. Սիոնի՝ ուր Թաղուած են Դաւիթ ու Սողոմոն և այլ քանի մի Թագաւորք Իսրայէլի, եւս և ի Բեթլեհեմ՝ ուր կայ տաճար մի ի յիշատակ առաջին Նահապետին Աբրահամու և Սառայի, ուր տեղ է իրենց գերեզմաններն ալ։ Իւր կրօնական պարտաւորութիւններէն եռքը՝ ընդունեց նա և յայցելութիւն իւր քաղաքիս հասարակութեց գլխաւոր անձինքները. ինչպէս նաև մեր ամենապատիւ Սրբազան Պատրիարգ Հայրն ալ, որուն քանի մի օրէն յետոյ բարեհաճեցաւ ինքն ալ փոխադարձ այցելութի ընելու քաղաքիս Վսեմ. Կառավարիչ Իզզէթ փաշային հետ։ Նորին վսեմութիւնը կրօնասէր, ջերմեռանդ, ու գիտնական անձ մի է և ճգնազգեաց, ինչպէս շատերը կը վկայեն, վասն որոյ խիստ իրաւամբք արժանի համարուած է Յ.վքաֆի միւշիւրութեան պաշտօնին, զոր վարելու համար յատկապէս հրաւիրուած էր Ռ. Դրան կողմէն, և արդէն սկսած է ի գործ դնել իւր պաշտօնը։

— Բեթլեհեմի հարաւային կողմը Եփրատ ըսուած տեղւոյն մօտ Սողոմոնի ժամանակէ շինուած, ինչպէս կը հաստատէ աւանդութիւնը, երեք հատ աւազաններ կան իրարմէ իրը նետընկէց մի հեռու, և ամենէն մեծին երկայնութեան չափն է 619 ոտք։ Սոնոյ մէջ մերձակայ բլուրներէն վազած անձրեւի ջրերը լեցուելով, Երուսաղէմի Յ.օմէրի Տաճարը կու գային յատուկ շինուած ադուգաններով, և բաւական ջուր կը մատակարարէին քաղաքիս բնակչաց։ Յիշեալ աւազանները խիստ երկար ժամանակներէ ի վեր աւրուած և ճեղքուած ըլլալնուն ջուր չեն պարունակեր իրենց մէջը, վասն որոյ և քաղաքս ամառ ժամանակ խիստ մեծ նեղութիւն կրկրէ ջրի պակասութենէն։ Եւ թէպէտ ասկէ իրբ 15 տարի առաջ Յարութիւն Գալիֆայի վերակացութեամբ նորոգութիւններ եղան, սակայն երկար չտեւեցին անոնք, անխնամ մնալով շուտով աւրուեցան և առջի վիճակին հասան. այս անգամ կ'իմանամք որ Վսեմափայլ Իզզէթ փաշայի յատուկ գործոնէութեամբ նոյն ադուգաններն ալ հաստատուն կերպիւ նորոգուելու վերայ են. և յիշեալ աւազաններէն մէկը՝ որ արդէն շինուած է, բաւական ջուր պարունակած է նոր անձրեւներուն ուխերովը։ Կը յուսամք որ շնորհիւ Ն. Վսեմութեան առաջիկայ ամառը բաւական ջուր պիտի ունենայ մատակարարելու թէ Տաճարին և թէ ուրիշ քանի մի տեղերու։

— Նոյեմբեր 22ին եկաւ ի Պոլսոյ Մէքսիկայի Տէրութեան Դեսպան Ն'էնէռալ Էոնարաս Մարքէզը։ Յիշեալ մեծասքանչ պաշտօնատարին սուրբ Քաղաքս գալուն նպատակն է նոր հիւպատոսարան մի հաստատել իւր Կայսերական Տէրութեանը կողմանէ. և նոյն պաշտօնին յատկացեալ անձն ալ հետը բերած էր, այն է արժանապատիւ հիւպատոս Էդրօ Տէ Հարօ։ Յիշեալ ամսոյն 26ին Ամենապատիւ սրբազան Պատրիարգը փութացաւ քանի մի երեւելի եկեղեցականներով և իւր աւագ Թարգմանաւը անոր բնակարանը երթալ թէ իւր գալուստը և թէ քաղաքիս մէջ նոր հաստատուելիք Հիւպատոսութեան պաշտօնը շնորհաւորելու։ Երկու օրէն յետոյ հաճեցաւ նորին Վսեմութի՝ Մէքսիկայի Վեհափառ Կայսեր արժանաւոր երեսփոխանը դալ մեր վանքը ի փոխադարձ այցե-

digitised by A.R.A.R.@

լութիւն Սրբազան Պատրիարգ Հօր, և երկրորդ անգամ եւս Հիւպատոսին հետ մէկտեղ գոր և ներկայացնելով Ն. Ամենապատիւ Սրբազնութեան՝ շնորհակալ եղաւ ի պատիւ իւր ցուցուած յարգանացն և հիւրասիրութեան։ Թէ՛ առաջին անգամուն՝ որու ընկերացած էր նա և Ամենապատիւ Սրբազնութիւնը, և թէ երկրորդ անգամին մեծ փափագանօք հաճեցաւ շրջել թէ Ս. Յակոբայ մայր Եկեղեցին, թէ Ս. Հրեշտակապետաց վանքը, որ է Ննա քահանայապետի պալատը, և թէ ի Ս. Փրկիչ, որ էր Կայիափայի տունը, և հիմակ երկուքն ալ ուխտատեղիք են Քրիստոսի քանտերուն պատճառաւը։ Բայց ի այս սրբավայրերէն սիրով պտըտեց նա և նոր Ռեմարանը և Թանգարանը, ուր գտնուած հնութեանց հաւաքածոյքը տեսնելով խիստ գոհ եղաւ, և իւր շնորհակալութիւնը գրութեամբ յայտնեց Ս. Աթոռոյս գեղեցիկ հաստատութեանցը վերայ. որոյ բնագրին օրինակն ու թարգմանութիւնն է հետեւեալը։

Le Général de division, Envoyé extraordinaire et Ministre Plénipotentiaire de la Majesté l'Empereur du Mexique près de Sa Majesté le Grand Sultan, a eu l'honneur et le plaisir de visiter cette Bibliothèque, qui fait honneur à Monseigneur le Patriarche, aujourd'hui le 10 Décembre, 1865.

LEONARDO MARQUEZ.

Զօրապետ զօրաբաժնի. Նուիրակ արտաքոյ կարգի և պաշտօնեայ լիազօր Ն. Վեհափառութեան Կայսեր Մէքսիկայի առ ընթեր Ն. Վեհափառութեան Մեծի Սուլթանին, ստացաւ զպատիւ և զհաճութիւն յայց ելանելոյ Գրքատանս, որ պատիւ բերէ Գերամեծար Պատրիարգին, այսօր ի 10 Դեկտեմբերի, 1865։

ԼԵՈՆԱՐԴՈ ՄԱՐԳԵՍ

—Վերջին ամսոյս 20 ին՝ Ամենապատիւ Սրբազան Պատրիարգը երկու Եպիսկոպոսօք և քանի մի վարդապետօք գնաց Բրուսիոյ, Աւստրիոյ, Դաղղիոյ, Սպանիոյ, և Անգղիոյ մեծապատիւ Հիւպատոսաց, նմանապէս և Մէքսիկայի Վսեմ. Դեսպանին և Անգլիական եկեղեցւոյ Եպիսկոպոսին ի շնորհաւորութիւն տարեմտի նոցա, ինչպէս սովորութիւն է փոխադարձ այցելութիւններով մեծարել զիրար։ Ամերիկայի հիւպատոսը արդէն հրաժարած ըլլալով իւր պաշտօնէն և դեռ իւր յաջորդը հասած չըլլալով, յիշեալ տէրութեան փոխ—հիւպատոս մեծարգոյ Ղազարոս աղայ Արապիոնեանը ընդունեցաւ արժանաւոր պատուով զՆորին ամենապատիւ Սրբազնութեան այցելութիւնը։ Բարեբաղդաբար հոս կը գտնուէր նա և ուխտի պատճառաւ յիշեալ Ղազարոս աղայի եղբայր մեծարոյ Սիմօն աղայն, որ նոյնպէս Ամերիկայի և Բրուսիոյ տէրութեանց փոխ—հիւպատոս է ի Յոպպէ։ Երկու մեծարոյ հարազատք խիստ արժանաւոր կերպիւ մեծարեցին ըզ-Սրբազան Հայրը ի գիմաց իրենց Տէրութեանցը։

—Ամսոյս 28 ին սովորական հանդէսով կատարեցաւ Սուրբ Յակոբայ մայր Եկեղեցւոյ մէջ սուրբ Աստուածածնայն Քրիստոսի՝ Յակոբայ և Յովհաննու որդւոյն Որոտման տօնախմբութիւնը։ Բոլոր եկեղեցական հանդէսներու մէջ նշանաւոր է սոյն օրուան եղած հոգեւոր արարողութիւններն ու հանդիսաւորութիւնը, և բարեպաշտ ուխտաւորաց սրտին ու հոգւոյն մէջ անջնջելի կը տպաւորէ հոգեւորական զմայլման հետ մէկտեղ երկնաւոր մխիթարութիւններ ու քաղցր զգացմունքներ։ Ամենապատիւ Տէրայ Սրբազան Պատրիարգը մասոյց սուրբ Պատարագը. նմանապէս ինքն եղաւ Թափօրին Հանդիսապետը, որ ինչպէս յայտնի է՝ եկեղեցւոյ մէջ կը կատարուի պատարա-

digitised by A.R.A.R.@

գէն յետոյ։ Այն Թափօրական հանդիսին մէջ կը գտնուին նաև երեք աղգաց եկեղեցականք ալ, այսինքն Ա-սորուոց, Խպտուոց և Հապէշոց, որոնք Հայոց ազգին հետեւակ կը համարուին։ Ներկայ տարուոյս սայն հանդէսին փառաւորութիւն տուօղն էր ըստ մեծի մասին Պատրիարգի ներկայութիւնը, ուսկէ չորս տարիէն ի վեր է զուրկ էին թէ միաբանք և թէ ուխտաւորք։

Դարձեալ մեծ պատիւ ըրաւ հանդիսիս Մէքսիկայի վեսմափայլ Դեսպանին ներկայութիւնը, որ բարեպաշտական ոգւով փութայց առաջակայ գտնուիլ, որու ընկերացեալ էին քաղաքիս Մէքսիկայի նոր ընդհանուր հիւպատոս Տօն Փեդրոտէ Հարօն, աւստրիական եկեղեցւոյ առաջին և երկրորդ վերապատուելի տեսուչները Տօն Հերմանօ Զիօքքէ, և Տօն Հերմանօ, և ուրիշ քանի մի նշանաւոր եւրոպացիք։ Պատարագէն յետոյ Ամենապատիւ Սրբազան Պատրիարգը հրաւիրեց զվսեմափայլ Դեսպանը հեռաբեղաղ անձինքներով և արժանաւոր կերպիւ մեծարեց զնրենք հրաւիրելով ի միասին ի ճաշ Միաբանութեան սեղանատունը։ Ամբոր այս հոգեւոր հանդէսներուն մէջ եթէ կար տրտմալի բան մի, այն էր բարեպաշտ ուխտաւորաց նուազութիւնը, որոնց թիւը ընդ ամենը հազիւ կայր հարիւր յիսուն հոգի, որ ուրիշ տարիներու հետ բաղդատելով զդալի տարբերութիւն կը գտնենք։

Մեսիայի գերդաստանը։

Սատա—Դորա Պուդովինայի մէջ պզտիկ քաղաք մի է Հրէից՝ Ցերնովիչէն քիչ հեռու, որ Աւստրիոյ վերաբերեալ դքսութեան մի գլխաւոր քաղաքն է։ Այս քաղաքս որդոտաքս Հրէաներուն սուրբ քաղաքն է, և անոր մէջն է Մեսիայի գերդաստանը։

Այս այն գերդաստաններէն մէկն է, ուսկէ պիտի ծնանի Մեսիան ըստ աւանդութեան և նախապաշարման Իսրայէլացւոց։ Այս գերդաստաններուն սեփական անուն տրուած է Սատրք բառը որ Արդար կը նշանակէ։ Կալիցիայի Պէլս, Փոալաքիայի Բորք, ու Սանտոմիրի կառավարութեան Բոզէնչիա քաղաքներուն մէջ շատ Սատրքներ կը գտնուին. և այս գերդաստաններուն մէջ ամենէն աւելի յարգութիւն ունեցողն է Սատա—Դորա բնակողը, որ Փոալաքիայի մէջ ծնած բնիկ քաղաքացի է։

Այն գերդաստանիս հիմակուան գլխաւորը, որոյ Դաւիթ մարգարէէն ուղղակի սերիլը յայտնապէս ընդունուած է հաղարաւոր Սլաւեան Հրէաներէ, Իէպիշ Իսրոլքա անուն ծերունի անձ մի է, բայց քիչ նմանութիւն ունի սուրբ Դրոց աւանդած ծերունիներուն կերպարանացն ու կացութեան. սակայն զինքը յարգոյ ու մեծարելի ընող սա արժանաւորութիւնն ունի, որ Ռուսիոյ ու Լեհաստանի մէջ գտնուող Հրէից ամենէն հարուստն և ունեւորն է։

Իսրոլքայի գերդաստանը, որու հրաշքներ գործելու կարողութիւնը ընծայած է աւանդութիւնը, միլիոնաւոր դանձեր ու հարստութիւններ դիզած է, և իւր բնակած քաղաքը Սատա—Դորան յատուկ ուխտատեղի մի եղած է։ Պուդովինայի,

digitised by A.R.A.R.@